ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի կողմից 2011թ հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը կատարած աշխատանքների մասին

Ներկայացված է 18.01.2011. թ համայնքի ժողովում:
/Ձեկ. համայնքի ղեկավար Գ.Ստեփանյան/

Հարգելի տանձուտցիներ և հյուրեր թույլ տվեք Ձեզ ներկայացնել Տանձուտի գյուղապետարանի և ավագանու կողմից 2011թ-ի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը կատարած աշխատանքները:

Ընթացիկ ժամանակաշրջանում անցկացրել ենք 4 ավագանու նիստ՝ կայացրել ենք 27 որոշումներ: Պատասխանել ենք ստացված բոլոր 71 գրություններին և 70 դիմումներին:

Գազաֆիկացվել է գյուղապետարանի շենքը:

Համայնքում 1-ին կիսամյակի ընթացքում սիստեմատիկ կատարվում է աղբաթափում:

Մարտի 8-ի կանանց միջազգային տոնի կապակցությամբ համայնքային ենթակայության հիմնարկների կանանց և դպրոցի կին մանկավարժների համար կազմակերպվել է միջոցառում և հանձնվել է նվերներ:

Գյուղապետարանում ստեղծվել է հանձնաժողով , կատարվել է անասունների և համայնքի տարածքում գտնվող հողերի և ցանքերի հաշվետվություն :

Մեծ հաղթանակի 66-րդ տարելիցի նախօրյակին մաքրվել է գյուղի կենտրոնում գտնվող հուշարձան կոթողը և կազմակերպվել է միջոցառում , տրվել է դրամական օգնություն պատերազմի վետերաններին և

ազատամարտիկներին:

Գյուղապետարանը ավագանու անդամների հետ կազմակերպված ձևով անցկացրել է գարնանային զորահավաքը : Զինակոչիկների և նրանց ծնողների հետ անցկացրել ենք ռազմահայրենասիրական թեմայով զրույցներ ,.որի արդյունքում ոչ մի զինակոչիկ չի խուսափել զինվորական ծառայությունից:

Մայիսի 1-ից մասնակի ընթացիկ վերանորոգում սկսվեց մանկապարտեզում ,քանի որ գտնվում էր անմխիթար վիճակում : Փոխվեցին պատուհանները ,վերանորոգվեցին ճաշասենյակը և նախասենյակը: Հունիսի 1-ից համայնքում գործում է մանկապարտեզ , որտեղ հաճախում են 50 երեխա, ձեռք է բերվել նոր գույք:

Գյուղապետարանը մասնակցել Մայիսի 28-ի Սարդարապատում կազմակերպված միջոցառմանը:

Գյուղում գործում է 19-րդ դարի եկեղեցի ,որը օգնում է համայնքի բնակչության հոգևոր դաստիարակությանը:

Տրվել է դրամական օգնություն գյուղի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձման աշխատանքները: Գույքահարկի գանձում 1-ին կիսամյակի պլանով նախատեսվել է 650.0հազ.դրամ, փաստացի կատարվել է 330.4 հազ.դրամ , 50.8 % :

Հողի հարկի 1-ին կիսամյակի պլանը նախատեսվել է 2800.0հազ.դրամ, փաստացի կատարվել է 1116.9 հազ.դրամ 39.8%:

Վարձակալական հողերի վարձավճարների 1-ին կիսամյակի պլանը 1000.0հազ.դրամ, փաստացի կատարվել է 925.4հազ.դ., 92.5% -ով:

Պետությունից ստացված դոտացիան կատարվել է 100% ով:

Համայնքն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ: Հետագա ծրագրերում նախատեսված է ակումբի և մանկապարտեզի և բուժ ամբուլատորիայի վերանորոգում:

Գյուղապետարանի կողմից արվում է ամեն ինչ աշխատանքները կազմակերպված և արդյունավետ անցկացնելու համար:

Տանձուտ համայնքի ղեկավար Գ.Ստեփանյան